ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 5/1, ՀԵՌ. (374-15) 566072

« 07 » մայիսի 2026 թ.

№ ՍՇ/34.2-Ղ4-2/2414-2026

«ՇՎԱՐՑ» ՍՊԸ-ի տնօրեն
Ն. Պողոսյանին

Հարգելի պարոն Պողոսյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2026 թվականի ապրիլի 21-ի գրությամբ (պատճենը կցվում է) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին տեղեկացրել է Երևան քաղաքի Հանրապետության փողոցի №9 շենքում հայտնաբերված՝ առանց թույլտվության 1950-1965ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող ռադիոէլեկտրոնային միջոցի մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 60-րդ հոդվածը՝ հանձնաժողովը նախատեսում է քննարկել «ՇՎԱՐՑ» ՍՊԸ-ի կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու հարցը:

Անհրաժեշտ է 7-օրյա ժամկետում ներկայացնել նշված հարցի կապակցությամբ Ձեր պարզաբանումները:

Առդիր՝ 5 էջ:

Ս. Շահինյան

5/7/2026

X

ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան ☎ 015 58 08 08 (124)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

N 01/11.1/2813-2026

«…..»……2026թ.

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Մեսրոպյան,

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2026 թվականի փետրվարի 25-ի թիվ 01/11.1/1314-2026 գրության՝ տեղեկացնում եմ, որ սույն թվականի մարտի 11-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» (այսուհետ՝ «ՀՀԿ») ՊՈԱԿ-ի մասնագետները Երևան քաղաքի Միեր Մկրտչյան փողոցի №5ա հասցեում տեղակայված «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բջջային կապի «YE181» բազային կայանի մոտակայքում իրականացրել են 1950-1965 ՄՀց հաճախականային տիրույթում էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումներ և ուղղորոշման աշխատանքներ:

Արդյունքում, արձանագրվել են կողմնակի ազդանշաններ՝ Երևան քաղաքի Հանրապետության 9 հասցեում գտնվող շենքի 3-րդ կամ 4-րդ հարկերի ուղղությունից:

Ձեռնարկված միջոցների արդյունքում, հնարավորություն չի եղել մուտք գործել շենքի տարածք և պարզել տարածքի պատկանելիությունը: «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի մասնագետները հնարավոր են համարում, որ դիտարկվող տարածքում առկա է որևէ անսարք ռադիոէլեկտրոնային միջոց:

Վերը նշված տարածքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման առկայության և տարածքում գործունեություն իրականացնող անձի վերաբերյալ տեղեկությունները ճշտելու նպատակով, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@hti.am

հարցումներ են ուղարկվել ՀՀ կադաստրի կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Հարցման պատասխանների պատճենները կցվում են:

Կից ներկայացվում են սպեկտրագրամաների և լուսանկարի պատճենները:

Առդիր՝ 1 խտացված նյութ:

4/21/2026

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ.՝ 010 59 00 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N ՄԽ/5495-2026 «___»_____ 202__ թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Դավիթ Գասպարյանին

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Ի պատասխան Կադաստրի կոմիտե մուտքագրված Ձեր 2026 թվականի մարտի 19-ի N 07/11.1/1930-2026 գրության՝ հայտնում ենք, որ ըստ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալների՝ քաղաք Երևան, Կենտրոն, Միհեր Մկրտչյան փողոց N 5ա հասցեով գրանցված անշարժ գույքի միավոր առկա չէ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ ներկայացված լուսանկարում գծանշված անշարժ գույքի միավորին համապատասխանում է քաղաք Երևան, Կենտրոն, Հանրապետության փողոց N 9 հասցեով (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0303-0012) քաղաքացի Վազգեն Վոլոդյայի Պողոսյանի (անձնագիր՝ BA3084891, ծնված 01.11.1951 թ.) անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքը (վկայական՝ N 11032022-01-0015):

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված Հանրապետության փողոց N 9 հասցեի անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված են նաև «ՇՎԱՐՑ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02849035) անհատուց օգտագործման (վկայական՝ N 12042022-01-0157) և «ՍՈՖԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02889095) վարձակալության իրավունքները (վկայական՝ N 06062023-01-0259):

3/23/2026

X

ՄՀԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: KHACHATRYAN MHER 4108790022 Միհեր Խաչատրյան

Կատարող՝ Ռ. Հակոբյան
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
Հեռ.՝ 060-474235

Հարկատուների հիմնական տվյալներ

Հ/Հ	ՀՎՀՀ	Հարկ վճարող	Կարգավիճակ	Կարգավիճակի փոփոխության ամսաթիվ	Պետ. ռեգիստրի գրանցման ամսաթիվը	Պետ. ռեգիստրի գրանցման համարը	Իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Գործունեության ոլորտ	Գործունեության ոլորտի անվանում
1	02849035	«ՇՎԱՐԴ»	Գործող	11.11.2021	10.11.2021	273.110.1203710	(ՍՊԸ)	ԵՐԵՎԱՆ; ԿԵՆՏՐՈՆ; ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ; ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Փ. 9	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՄԱ Հանրապետության 9	I56.30.9, N79.90.1, R93.29.2	Բարերի և խմիչքների մատուցման ծառայություններ այլ կետերից, Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ, Բիլիարդի, բոուլինգի, սնուկերի թենիսի և հանանման խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն
2	00010054	«ԵՐԵՎԱՆՇԻՆ»	Գործող		16.08.1995	290.110.24478	(ՍՊԸ)	ԵՐԵՎԱՆ; ՇԵՆԳԱՎԱԳ; ՇԵՆԳԱՎԱԳ ԹԱՂԱՄԱՍ; ՇԻՐՎԱՆԻ Փ. 74/2	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՄԱ Հանրապետության 9	L68.20.1	Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ
3	02889095	«ՍՈՖԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ»	Գործող	25.04.2023	20.04.2023	286.110.1312728	(ՍՊԸ)	ԵՐԵՎԱՆ; ԿԵՆՏՐՈՆ; ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ; ՎԱՍՊՈՒՐԱՆ ՓՈՂ. 26/1	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՄԱ Հանրապետության 9	J62.01.0	Ծրագրային ապահովման մշակում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«____» _____ 20 թ.

No _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 30.03.2026թ. թիվ 07/11.1/2232-2026 գրության

Հարգելի պարոն Գասպարյան

Հայտնում եմ, որ հարկ վճարողների գործունեության փաստացի հասցեների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ՊԵԿ տեղեկատվական շտեմարանից հնարավոր է ստանալ, եթե տվյալ հասցեում առկա է գրանցված հսկիչ դրամարկղային մեքենա:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ձեզ է տրամադրվում ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական շտեմարանում 31.03.2026թ.-ի դրությամբ առկա տվյալների համաձայն այն հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց անվամբ՝ «Երևան քաղաքի Հանրապետության 9» հասցեում, առկա է հաշվառված «գործող» կարգավիճակի հսկիչ դրամարկղային մեքենա:

Առդիր 1 էլեկտրոնային փաստաթուղթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ 4/2/2026

X ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN DAVIT 3601870398

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ ՀՏևՌՎ վարչություն, ՀՏ բաժին
Գլխավոր հ/տ Արման Մալխասյան Հեռ. 010 30 40 55 (4097)

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ARMENIA YEREVAN
0025
15 JUN 2026

ARMENIA YEREVAN
0010
11 MAY 2026

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
ՍԾ/34.2-Դ4-2/2414-2026պ/տ

1106

08 MAY 2026

L0133

ARMENIA
12 JUN 2026

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed

ARMENIA YEREVAN 0025 15 JUN 2026

ARMENIA YEREVAN 0010 11 MAY 2026 HayPost

...գրանցման գործակալ / ...operator of origin

ՃԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item: «ՇՎԱՐՑ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Զաքյան փ., 5 2., 16

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

Առաջնային/Priority
Օդային/By airmail

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO133354691AM

Վերադարձնել /
Return to

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0133354691AM

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ՍԾ/34.2-Ղ4-2/2414-2026պ/տ
Հավելյալ Նշում 2՝